ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ՝
Մ.Գ.Թ. ՊՈՂՈՍՅԱՆ Հ.ԲԻՇԱՐՅԱՆ

«ՀԵՀ»
"EVA"
00436097
03 նոյեմբեր 2023

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Արման Յուրիկի Թադևոսյանի՝ «Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտը՝ որպես անմիջական ժողովրդաիշխանության իրացման ձև» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ ներկայացված ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների աստիճանի հայցման համար

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի եվրոպական համալսարանի Իրավագիտության ամբիոնի 2023 թվականի հունիսի 30-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 6):

Մասնակցում էին՝

Իրավագիտության ամբիոնի վարիչ ի.գ.թ. Ի. Իսկանդարյանը, ամբիոնի դասախոսներ՝ ի.գ.թ., դոցենտ Վ. Թորոսյանը, ի.գ.թ., դոցենտ Մ.Մուրադյանը, ի.գ.թ. Լ.Տոնոյանը, ի.գ.թ. Դ.Սարգսյանը, ի.գ.թ. Վ.Պողոսյանը, ի.գ.թ. Ա.Թադևոսյանը, Ա. Գյուլումյանը, Լ.Զիրոյանը, Ա.Բիշարյանը, Ա.Նահապետյանը, Գ. Ադոնցը, Լ. Մանուսաջյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը, կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտի՝ որպես անմիջական

ժողովրդաիշխանության իրացման ձևի տեսագործնական ուսումնասիրությանը և համալիր հետազոտությանը:

Թեև իրավաբան-գիտնականների և քաղաքագետների կողմից բավականաչափ հետազոտվել է ժողովրդաիշխանության սկզբունքը և ժողովրդավարությունը առհասարակ, սակայն դրա բաղադրիչը կազմող ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտի վերաբերյալ, այդուհանդերձ, առկա են սակավաթիվ աշխատություններ և ուսումնասիրություններ:

Հետազոտության թեման բավական արդիական է, ոչ միայն խնդրո առարկա նյութի բովանդակային խնդիրների բացահայտման և իրավական շեշտադրումների կատարման, այլ նաև ներկա բարդ աշխարհաքաղաքական և ներպետական զարգացող իրադարձությունների պայմաններում ժողովրդաիշխանության սկզբունքի իրացման պատշաճ կառուցակարգերի սահմանման անհրաժեշտությամբ: Մանսավորապես, եթե հաշվի առնենք, որ այս օրերին Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ քաղաքացիական նախաձեռնության կարգով նախաձեռնվել են իրավաքաղաքական գործընթացներ, ապա թեմայի հետազոտությունը առավել մեծ հրատապություն է ձեռք բերում:

Ատենախոսության արդիականությունը, դրա տեսական և կիրառական նշանակությունը պայմանավորված են ընտրված թեմայի գիտական մշակվածության աստիճանով, Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական նախաձեռնության կարգով գործընթացների և փորձի բացակայությամբ, ինչպես նաև 2015թ. սահմանադրական փոփոխությունների հայեցակարգային մոտեցումներով:

Ատենախոսության հեղինակը նպատակ է հետապնդում ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտի տեսագործնական, համալիր և բազմակողմանի հետազոտմանը, որը, թերևս, կարող է նպաստել այդ ինստիտուտին վերաբերող իրավակարգավորումների կատարելագործմանը և արդյունավետ մեխանիզմների ներդրմանը:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք և ըստ էության համապատասխանում է ատենախոսի կողմից իր առջև դրված նպատակներին ու խնդիրներին:

Այսպես, առաջին գլխում հեղինակը քննարկել է ժողովրդաիշխանությունը որպես սկզբունքը սահմանադրական կարգի հիմքունքների ներքո, փորձելով բացահայտել «ժողովուրդ», «իշխանություն», «ազգ» եզրույթները և անդրադարձել է ժողովրդաիշխանության սկզբունքի իրացման ներկայացուցչական և անմիջական ձևերին տեսական մակարդակում՝ այդ թվում ժողովրդաիշխանության սկզբունքը վերլուծելով սուբյեկտիվ սահմանադրական իրավունքի տեսանկյունից: Երկրորդ գլխում ատենախոսն անդրադարձել է ժողովրդաիշխանության իրականացման ձևերին Հայաստանի Հանրապետությունում և ներկայացրել է ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը: Ատենախոսության վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ որոշակիորեն հիմնավորված եզրահանգումներով ներկայացվում է անմիջական ժողովրդաիշխանության և ժողովրդական իրավաստեղծ գործունեության հարաբերակցությունը՝ ընդգծելով դրանց սերտ կապը և շեշտադրելով Հայաստանի Հանրապետությունում ժողովրդական իրավաստեղծ գործունեությունը ժողովրդաիշխանության «անմիջական» տեսակ որակելու գործոնները: Հեղինակը երրորդ գլխում վերլուծել է ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության իրավական կարգավորման առանձնահատկությունները և դրա զարգացման հեռանկարները:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտված է աշխատանքի եզրահանգումներում և աշխատանքում առկա գործնական առաջարկություններում: Ցանկալի կլիներ տեսական մասով գիտական նորույթների սահմանման հարցում հեղինակն առավել խորքային մոտեցումներ ներկայացներ:

Քննարկվող հետազոտության տեսական և գործնական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հեղինակը առանձնացրել է ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը անմիջական ժողովրդաիշխանության՝ հանրաքվեի և հանրագրերի ինստիտուտներից, առաջարկել է այդ ինստիտուտի գործարկման համար անհրաժեշտ օրենսդրական

փոփոխություններ և առաջադրել է էլեկտրոնային ժողովրդավարության գործիքակազմի գործածումը Հայաստանի Հանրապետությունում: Որպես գիտական նորույթ ներկայացված որոշ առաջարկներ կարող են քննարկվել և օգտակար լինել օրենսդրական դաշտը բարելավելու տեսանկյունից:

Աշխատանքը գրված է գիտական լեզվաոճական պատշաճ եղանակով և իրավաբանական եզրութաբանության պահանջներին համապատասխան:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունում հեղինակը լիարժեքորեն օգտագործել է նորմատիվ նյութեր և տեսական-մասնագիտական գրականություն, ինչի շնորհիվ ատենախոսությունում ձևակերպված եզրահանգումները և առաջարկությունները ներկայանում են որպես կարևոր և հրատապ, այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում ներկայացնել որոշակի դիտողություններ և նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

1. Հեղինակն ատենախոսության շարադրանքում ակնարկներ է կատարում ժողովրդաիշխանության պատմական հիմքերի մասին ժողովրդաիշխանության էվոլյուցիան նկարագրելով թերի և անբովանդակ: Հեղինակը մեկ գլխի շրջանակներում քննարկում և բացահայտում է սահմանադրական կարգի հիմունքների բովանդակությունը, ապա պատմական սեղմ ակնարկ կատարում ժողովրդաիշխանության սկզբունքի վերաբերյալ, որից հետո դիտարկում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «ժողովուրդը», «իշխանությունը» «ժողովրդական իշխանությունը», «հանրային իշխանությունը», «ազգը» «ընտրազանգվածը», «ժողովրդավարությունը» և այլ հասկացություններ, ըստ էության առաջացնելով կատեգորիալ շփոթ: Սրանով հեղինակը ոչ այնքան տալիս է տվյալ եզրույթների վերաբերյալ դոկտրինալ բնութագրումներ և մասնավորեցումներ, որքան անհարկի ծանրաբեռնում և այդպիսով խոցելի է դարձնում ատենախոսության համակարգային կանոնակարգվածությունը:

2. Հարգելով ատենախոսի ակադեմիական ազատությունը և նաև հաշվի առնելով նրա կողմից որպես հետազոտության նպատակ «Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտի համալիր և բազմակողմ ուսումնասիրությունը» նշելը՝ կարծում ենք, որ հետազոտությունը պետք է անխուսափելիորեն անդրադարձ կատարեր իրավաստեղծ գործունեության բովանդակությանը՝ լայն և նեղ իմաստներով, և փորձեր տեղայնացնել ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը, ներկայացնելով դրա փուլերը և դրանց տալով սահմանադրաիրավական գնահատական: Սույն նկատառումը պայմավորված է նաև նրանով, որ ատենախոսը կարևորել է էլեկտրոնային ժողովրդավարության ներմուծումը և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը իրավաստեղծ նախաձեռնության գործում:
3. Պաշտպանության ներկայացվող առաջին դրույթն իր բնույթով առավելապես նկարագրողական շարադրանք է, որքան գիտական նորույթ: Հեղինակը որպես նորույթ է մատնանշում անմիջական ժողովրդաիշխանության սկբունքի՝ որպես հանրային իշխանության ներքո դիտարկվող բաղադրիչի հանգամանքը, որը սակայն մեր կարծիքով չունի գիտական նորույթին բնորոշ ինքնատիպություն և յուրօրինակություն: Կարծում ենք, որ պաշտպանվող դրույթ համարվելու համար հեղինակը պետք է կոնկրետացներ իր հիմնական միտքն այնպես, որպեսզի կրկնություն կամ հետևություն չընկալվեր ՀՀ Սահմանադրության երկրորդ հոդվածով սահմանված սկզբունքի հետ առ այն, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:
4. Պաշտպանության ներկայացվող երկրորդ դրույթն առավելապես կարող է ծառայել որպես եզրահանգում: Թեպետ հեղինակը փորձ է կատարել իրավագիտության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդիր բարձրացրել, սակայն ցանկալի կլիներ, որպեսզի գիտական նորույթին հավակնելու համար ներկայացներ գիտականորեն հիմնավորված խնդրի լուծում:

Եզրակացություն

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ Ա. Թադևոսյանի կողմից հրատարակված հոդվածներում լիարժեքորեն արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Սույն կարծիքում նշված դիտողություններն, ըստ էության կարող են հաղթահարվել մասնագիտական խորհրդում հաջողությամբ պաշտպանելու դեպքում և չեն ազդում Ա. Թադևոսյանի գիտական աշխատանքի ընդհանուր դրական արդյունքի վրա:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Արման Յուրիկի Թադևոսյանի՝ «Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտը՝ որպես անմիջական ժողովրդաիշխանության իրացման ձև» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման Կանոնակարգով նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.02.- «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀԵՀ Իրավագիտության ամբիոնի վարիչ՝ ի.գ.թ., Ի. Իսկանդարյան

Հաստատում եմ Ի. Իսկանդարյանի ստորագրությունը

ՀԵՀ Գիտական խորհրդի քարտուղար՝ ի.գ.թ, դոցենտ, Վ.Թորոսյան